Թեմատիկ պլանավորում

Մայրենի 5-րդ դասարան

(տարեկան 238 ժամ, շաբաթական 7 դասաժամ)

Դասագրքի հեղինակներ՝ Դ.Գյուրջինյան, Թ.Ալեքսանյան, Ա.Գալստյան

Հրատարակությունը՝ 2019թ.

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նպատակ

Կարևորել մայրենի լեզվի դերը, ծանոթացնել հայ գրող-բանաստեղծների՝ մայրենիի մասին գրած բանաստեղծություններին և ասույթներին, ընկալելի դարձնել ձայնավորների և բաղաձայնների, տառի և հնչյունի, երկհնչյունի և այլ հնչյունակապակցությունների տարբերությունները:

Վերջնարդյունք

Կարողանալ գիտակցել մայրենի լեզվի անփոխարինելի տեղը մարդու կյանքում, նաև նրա պահպանման գործում սեփական ես-ի կարևորումը: Անսխալ, հասկանալով ընթերցել, անգիր արտասանել չափածո հատվածներ, բացատրել անհասկանալի բառերն ու արտահայտությունները, հնարավորության դեպքում գտնել դրանց հոմանիշ և հականիշ տարբերակները: Լսել ուսուցչին, ընկերներին, հասկանալ ստեղծագործության միտքն ու բովանդակությունը և հաճույքով մասնակցել խմբային աշխատանքներին: Կարողանալ դասակարգել հայերենի հնչյունները, բանավոր խոսքում պահպանել դրանց ճիշտ արտասանությունը: Զանազանել ձայնավոր և բաղաձայն հնչյունները, տարբերել երկհնչյունը այլ հնչյունակապակցություններից: Բացատրել տառի և հնչյունի տարբերությունը, սահմանումներին համապատասխան բերել մեկ-երկու օրինակ:

N	Դաս	Ժամ 26	Էջ
1	Մուտքի դաս: Զրույց մայրենիի մասին	1	3
2	Ս. Կապուտիկյան, «Խոսք իմ որդուն»:	3	4, 5
3	Հնչյունաբանություն	1	
4	Ն. Զարյան, «Հայոց լեզուն»:	2	7, 8
5	Հայերենի հնչյունները և նրանց դասակարգումը: Ձայնավոր հնչյուններ	2	
6	Ա. Բիտով, «Հայաստանի դասերը»:	2	10, 11
7	Բաղաձայն հնչյուններ: Եռաշարք, երկշարք և միաշարք բաղաձայններ	2	
8	Ասույթներ մեր մայրենի լեզվի մասին	1	13, 14
9	Հայերենի երկհնչյունները	1	14
10	Գ. Էմին, «Մեր այբուբենը»	3	16, 17
11	Տեքստի մասին	1	19
12	*Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ*	1	20
13	***Թեմատիկ գրավոր աշխատանք***	1	
14	Գրավորի քննարկում և սխալների ուղղում	1	
15	Արտադասարանական ընթերցանություն	4	

ԵՐԿՆՔԻՑ ԵՐԵՔ ԽՆԶՈՐ ԸՆԿԱՎ

Ուղղագրություն և ուղղախոսություն

Նպատակ

Ծանոթացնել հեքիաթի տեսակներին և ժանրային առանձնահատկություններին, ձևավորել տեքստի ուսումնասիրման, միտքը տարբեր տիպի նախադասություններով արտահայտելու և հիմնական ու երկրորդական մտքերն առանձնացնելու կարողություն, հարստացնել բառապաշարը: Զարգացնել ընթերցելու, կարդացածը վերարտադրելու, խմբում աշխատելու կարողություններ: Ընկալելի կերպով բացատրել ձայնավորների, բաղաձայնների ու երկհնչյունների ուղղագրական և ուղղախոսական կանոնները:

Վերջնարդյունք

Կարողանալ տարբերակել հեքիաթի տեսակները և ժանրային առանձնահատկությունները, արտահայտիչ և հասկանալով ընթերցել, տեքստում զատել գլխավորը երկրորդականից, կազմել գրագետ խոսք, վերարտադրել լսածն ու կարդացածը՝ պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականությունը: Ըմբռնել և յուրացնել ձայնավորների, բաղաձայնների և երկհնչյունների ուղղագրությունն ու ուղղախոսական կանոնները, հնարավորինս անսխալ գրել տարբեր բնույթի տեքստեր:

N	Դաս	Ժամ 79	էջ
1	Մուտքի դաս	1	
2	«Ուրիշի համար փոս փորողը...»: **Է, Ե**-ի Ուղղագրություն և ուղղախոսություն	7	22, 26
3	«Մուրացկանը և հարուստը»: **Օ, Ո**-ի ուղղագրությունը և ուղղախոսությունը	6+1	29-34
4	**Թեմատիկ գրավոր աշխատանք**	1	
5	Մ.Կորյուն,«Այգեպան Մոսին»: **Ը**-ի ուղղագրությունը	5	37, 40
6	Հովհ. Թումանյան, «Խոսող ձուկը»: **Ց** ձայնակապի ուղղագրությունը և ուղղախոսությունը	5	43-47
7	**Թեմատիկ գրավոր աշխատանք**	1	
8	Լեոնարդո դա Վինչի, «Կարապը»: **Յա-Իա-Եա** երկհնչյունների ուղղագրությունը և ուղղախոսությունը	3	50
9	**Ույ-Յու** երկհնչյունների ուղղագրությունը	2	53
10	**Ոյ-Յո-Իո** երկհնչյունների ուղղագրությունը	1+1	54-55
11	***Թեմատիկ գրավոր աշխատանք***	1	61
12	Ղ. Աղայան, «Եղեգնուհին»: Բ-Պ-Փ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը	7+1	56-63
13	Հ.Ք. Անդերսեն ,« Սոխակը»: Գ-Կ-Ք բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը	6+1	66-73
14	**Թեմատիկ գրավոր աշխատանք**	1	
15	**Գործնական աշխատանք**	1	
16	Է.Միլիտոնյան«Արդուկն ու մարդուկը»: Դ-Տ-Թ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը	5+2	74-80
17	Ա.Իսահակյան, «Նուկիմ քաղաքի խելոքները»: Զ-Ծ-Ց և Ջ-Ճ-Չ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը	7+1	81-89
18	***Թեմատիկ գրավոր աշխատանք***	1	
19	Վ.Սարոյան, «Երեք Խորհուրդ»: Ղ-Խ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը	5	90-96
20	*Արտադասարանական ընթերցանություն*	1	
21	*Արտադասարանական ընթերցանություն*	1	
22	Ամրակայող վարժություններ	1	
23	***Թեմատիկ գրավոր աշխատանք***	1	
24	***Արդյունքների ամփոփում***	1	
25	***Թեմայի ամփոփում***	1	

N	Դաս	Ժամ 32	էջ
1	Է.Ավագյան, «Գարունածաղիկը» Մ-Ն և Վ-ֆ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը	5+1	97- 104
2	Ս.Վարդանյան « Թռիչք»: Ր-Ռ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը	3+1	105- 110
3	Օ.Ուայլդ. «Աստղամանուկը»1-ին մաս: Զ-Ս բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը	3+1	111- 114
4	Օ.Ուայլդ. «Աստղամանուկը» 2-րդ մաս: Ժ-Շ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը	2+1	115- 118
5	Օ.Ուայլդ. «Աստղամանուկը» 3-րդ մաս: Հ բաղաձայնի ուղղագրությունն ու ուղղախոսությունը	3+1	119- 123
6	Օ.Ուայլդ. «Աստղամանուկը» 4-րդ մաս: ԵՎ/և/-ի ուղղագրությունն ու ուղղախոսությունը	3+1	124- 129
7	Ռ.Մարուխյան «Կախարդված տղան» : Կրկնակ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը	4+1	130- 137
8	Ամրակայող վարժություններ	1	
9	***Թեմատիկ գրավոր աշխատանք***	1	
10	*Թեմայի ամփոփում: Հեքիաթի մասին*	1	

ԱՌԱԿՍ Ի՞ՆՉ ԿՑՈՒՑԱՆԵ

Նպատակ՝

.ուսուցանել առակի ժանրային առանձնահատկությունները,

.ընկալել տալ այլաբանությունը որպես գրական հնարք,

.ձևավորել բարձր արժեհամակարգով ապրելու գիտակցում,

.ուսուցանել վանկը և դրանով պայմանավորված շեշտադրությունն ու տողադարձը:

Վերջնարդյունք՝

.տարբերել առակի ժանրային առանձնահատկությունները

.ընկալել այլաբանությունը

.նկարագրել, բնութագրել առակների հերոսներին

.ճանաչել հայ և օտարազգի նշանավոր առակագիրներին

.ինքնուրույն տեսակետ հայտնել ընթերցածի վերաբերյալ

.հորինել առակ՝ հաշվի առնելով ժանրային առանձնահատկությունները

N	Դաս	*Ժամ* *25*	էջ

11	Մուտքի դաս: Առակ.արձակ և չափածո առակներ	1	141- 143
12	Վ.Այգեկցի «Առյուծն ու մարդը»	1	142,14 3
13	Հ.Շիրազ «Մարգարիտն ու փրփուրը»: Վանկ	3	144- 147
14	Ա. Խնկոյան <<Խխունջն ու սունկը>>	1	148
15	Մ. Գոշ <<Ուղտը և իր խնամողը>>	1	149
16	Եզոպոս <<Աղվեսն ու հովազը>>, <<Գայլերն ու ոչխարները>>	1	150- 151
17	Եզոպոս <<Գայլերն ու ոչխարները>>	1	150- 151
18	Եզոպոս <<Ուղևորներն ու սոսին>>	1	152
19	Ավ. Իսահակյան <<Կյանքից թանկ բանը>>: Տողադարձ	4	153- 155
20	*Ամրակայող վարժություններ*	1	
21	***Թեմատիկ գրավոր աշխատանք***	1	
22	Իվան Կռիլով <<Տերևներն ու արմատները>>: Խոսքի զարգացում	2	157
23	Հիսուսի առակները <<Մարդը, որ ներել չէր ուզում>>: Խոսքի զարգացում	2	159
24	*Թեմայի ամփոփում: Եզոպոս, «Գյուղացին և իր որդիները»*	1	162
25	***Գործնական աշխատանք***	1	
26	*Արտադասարանական ընթերցանություն*	3	

ԵՐԳ ՈՒ ՏԱՂ

Նպատակ ՝

.արձակ և չափածո գործերի հստակ տարանջատում,

.երգերի վերածված բանստեղծությունների հետ ծանոթացում,

.բառային և տրամաբանական շեշտերի իմացություն,

.հնչյունափոխության կանոնների ծանոթություն և իմացություն,

բանաստեղծության հանգի, ռիթմի և տան մասին գիտելիքների ձեռքբերում:

Վերջնարդյունք՝

.չափածո ստեղծագործության առանձնահատկությունների վերաշարադրում,

.չափածո ստեղծագործության դրսևորման ձևերի իմացություն (երգ),

.բառային և տրամաբանական շեշտերի տարբերակումը բնագրում և դրանցից յուրաքանչյուրին բնորոշ առանձնահատկությունների կիրառությունը տեքստում,

.հնչյունափոխության կանոնների անսխալ կիրառությունը, տեքստում հնչյունափոխված արմատների առանձնացումն ու դուրսբերումը, անհնչյունափոխ արմատի հնչյունափոխությունը բանաստեղծական տողերի դասավորությունն ու դրանց համապատասխան անվանումները:

N	Դաս	*Ժամ* *41*	*Էջ*

27	Մուտքի դաս	1	166
28	<<Ծնունդ Վահագնի>>: Բանաստեղծության կառուցվածքը, գաղափարը	2	166
29	Ս. Շահազիզ <<Երազ>>	2	167
30	Շեշտ : Հայերենի շեշտի վերջնավանկային դիրքը	3	168
31	Ամրակայող վարժություններ	1	
32	***Թեմատիկ գրավոր աշխատանք***	1	
33	Ա.Պարսամյան « Մեր լավաշ հացը»: Տրամաբանական շեշտ	2	171, 172
34	Ա.Իսահակյան « Գետակի վրա» Հնչյունափոխություն	2	173, 174, 175
35	Վ.Տերյան « Աշուն» Է ձայնավորի հնչյունափոխությունը՝ կախված շեշտից	3	176, 177
36	Հ.Շիրազ« Գարնանամուտ» Ի ձայնավորի հնչյունափոխությունը	3	178, 179
37	Գ.Սարյան « Կարոտ» Ու ձայնավորի հնչյունափոխությունը	3	181, 182, 183
38	Հ.Սահյան « Արագիլները» Ը ձայնավորի հնչյունափոխությունը	2	184, 185
39	Ամրակայող վարժություններ	1	
40	***Թեմատիկ գրավոր աշխատանք***	1	
41	Մ.Մարգարյան « Այդ քամին է քո» ՅԱ, ՈՒՅ, ՅՈՒ երկհնչյունների հնչյունափոխությունը	4	186, 187, 188
42	Վ.Դավթյան « Գյուղի առավոտ» Հանգ և ռիթմ	2	189, 190
43	Պ.Սևակ « Ջրերի լեզուն» Բանաստեղծական տուն	2	190, 191
44	Ամրակայող վարժություններ	1	
45	***Թեմատիկ գրավոր աշխատանք***	1	
46	*Թեմայի ամփոփում: Բանաստեղծության մասին*	1	
47	*Արտադասարանական ընթերցանություն*	3	

ՆԱՄԱԿ

Նպատակ՝

.ընկալել տալ նամակն իբրև հաղորդակցման ձև,

.սովորեցնել նամակի կառուցվածքը,

.ձևավորել վերաբերմունք հայտնի մարդկանց տարբերվող, խորիմաստ նամակների հանդեպ,

.հայտնի մարդկանց նամակները դարձնել ուսանելի,

.ուսուցանել կոչականը և դրա կետադրությունը:

Վերջնարդյունք՝

.իմանալ նամակի կառուցվածքը,

.կիրառել նամակագրությունն իբրև հաղորդակցման եղանակ,

.համեմատել նամակագրության հին ու նոր եղանակները, կապել ժամանակի փոփոխության հետ,

.կիրառել նամակագրության հին ու ժամանակակից եղանակները,

.ընթերցել հայտնի մարդկանց նամակները,

.տարբերել կոչականը և ճիշտ կետադրել:

N	**Դաս**	**Ժամ 34**	**Էջ**
48	Ռ.Քիփլինգ «Թե ինչպես գրվեց առաջին նամակը»	3	194-197
49	Կոչական.շարադասությունը, կետադրությունը, հնչերանգը	2	194-199
50	Ամրակայող վարժություններ	1	
51	***Թեմատիկ գրավոր աշխատանք***	1	
52	*Արտադասարանական ընթերցանություն*	3	
53	Նամակ. կառուցվածքը՝սկիզբ,միջնամաս, ավարտ։ Նշանավոր մարդկանց նամակներն իրենց զավակներին	5	201-207
54	«Հայրենի անտառներ» (ըստ Մ.Ղուկասյանի)։	2	208-211
55	Պարզ և բարդ նախադասություն	2	208-211
56	*Ամրակայող վարժություններ*	1	
57	***Թեմատիկ գրավոր աշխատանք***	1	
58	Ալիսիա Կիրակոսյան «Նամակ առ Հայաստան»։ Նամակի տեսակներն ըստ բովանդակության	2	214, 215, 216
59	Ամփոփիչ դասաժամ	1	
60	*Արտադասարանական ընթերցանություն*	2	
61	Կրկնություն(Զայնավորների ուղղագրությունը)	2	
62	Կրկնություն(Երկհնչյունների ուղղագրությունը)	2	
63	Կրկնություն (Բաղաձայնների ուղղագրությունը)	2	
64	Կրկնություն(Վանկ, տողադարձ, պարզ և բարդ նախադասություններ)	2	